ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Նկարում պատկերված է.**

1) ձայնախորաչափ
2) խոնավաչափ
3) ճնշաչափ
4) տեղումնաչափ

2 **Որքա՞ն է երկու կետերի միջև իրական հեռավորությունը, եթե նրանք միևնույն միջօրեականի վրա են և միմյանցից հեռացված են 178^0.**

1) 10440 կմ
2) 20202 կմ
3) 19758 կմ
4) 3663 կմ

3 **Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 7,6 սմ է, իսկ իրականում՝ 2280 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.**

1) 1 : 3 000 000
2) 1 : 30 000
3) 1 : 300 000
4) 1 : 30 000 000

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հասարակածն ամենակարճ զուգահեռականն է:
2) Երկրագունդը պտտվում է Լուսնի շուրջը:
3) Հասարակածային շառավիղը բևեռայինից երկար է:
4) Սկզբնական միջօրեականը ամենաերկար միջօրեականն է:

5 **Ի՞նչն է բնորոշ տայգային.**

1) լայնատերև ծառերը
2) անբավարար խոնավությունը
3) գորշ անտառային հողերը
4) պոդզոլային հողերը

6 Պարբերաբար տաք ջուր և գոլորշի շատրվանող աղբյուրը կոչվում է.

1) ցունամի
2) մագմա
3) լավա
4) գեյզեր

7 Միատեսակ ջերմության և խոնավության հատկանիշներով օժտված ներքնոլորտի մեծածավալ օդը, որը ձևավորվում է միասեռ ընդարձակ տարածքի վրա, կոչվում է.

1) օդային զանգված
2) վերնոլորտ
3) մթնոլորտային ճնշում
4) մթնոլորտ

8 Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ ս. ս. է, իսկ գագաթին՝ 440 մմ ս. ս.: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի.

1) 1400 մ
2) 1120 մ
3) 2400 մ
4) 1020 մ

9 Նկարում պատկերված է.

1) գազամուղ
2) խճուղի
3) երկաթուղի
4) նավթամուղ



10 Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

1) լեռնահովտային
2) բրիզներ
3) պասսատներ
4) մուսսոններ

11 **Ո՞ր թերակղզիներն են բարեխառն գոտում.**

1) Քեյփ Յորք և Առնեմլենդ
2) Կալիֆոռնիա և Ֆլորիդա
3) Թայմիր և Չուկոտյան
4) Ալյասկա և Կամչատկա

12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Աշխարհում մակընթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
2) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:
3) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:
4) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:

13 **Բնութագրումով որոշել նեղուցը.**

Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրոս երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.

1) Մագելանի
2) Բերինգի
3) Կուկի
4) Թորեսի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
2) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:
3) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:
4) Կուր–Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Չնայած հյուսիսից հարավ մեծ ձգվածությանը՝ Հյուսիսային Ամերիկայում ձևավորվել է կլիմայական չորս գոտի:
2) Հարավային Ամերիկայի արևելյան ափամերձ Ֆոլկլենդյան տաք հոսանքի ազդեցությամբ Պատագոնիայի կլիման բարեխառն ծովային է:
3) Հասարակածային մուսսոնների տեսքով պասսատները, թափանցելով Հյուսիսային Ավստրալիա, առաջացնում են առատ տեղումներ:
4) Անտարկտիդայում տարվա մեծ մասն անհողմ եղանակներ են, որը նպաստում է արեգակնային ջերմության գրեթե 90 %–ի կլանմանը սառցածածկ մակերևույթի կողմից:

16 **Ո՞ր ծովային հոսանքներն են ազդում Եվրասիայի կլիմայի ձևավորման վրա.**

1) Բրազիլական և Պերուական
2) Գվինեական և Բենգելյան
3) Գվիանական և Գոլֆստրիմ
4) Հյուսիսատլանտյան և Մուսսոնային

17 **Ո՞ր կղզու (կղզիների) ափերի մոտով է անցնում օվկիանոսային տաք հոսանք.**

1) Կուրիլյան
2) Կանարյան
3) Մեծ Բրիտանիա
4) Ֆոլկլենդյան

18 **Անապատների ո՞ր զույգն է հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում.**

1) Կալահարի և Ատակամա
2) Սահարա և Թար
3) Կարակում և Ավազային մեծ
4) Ռուբ էլ Խալի և Լիբիական

19 Ո՞ր լիճն է քարտեզում նշված Դ տառով.

1) Չադ
2) Տանգանիկա
3) Նյասա
4) Ռուդոլֆ



20 Ո՞ր նավահանգիստն է քարտեզում նշված Հ տառով.

1) Քեյփթաուն
2) Ալժիր
3) Տրիպոլի
4) Ալեքսանդրիա

21 **Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ.**

1) կրթական բարձր մակարդակով
2) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
3) վաղ ամուսնություններով
4) գյուղական բնակչության գերակշռությամբ

22 **Ռուսաստանի բնակչության սեռային կազմում մեծ է կանանց բաժինը: Ինչո՞վ է պայմանավորված Սիբիրում և Ուրալում տղամարդկանց համեմատաբար մեծ բաժինը.**

1) ծնելիության մակարդակով
2) կյանքի միջին տևողությամբ
3) Երկրորդ աշխարհամարտի հետևանքներով
4) տնտեսական մասնագիտացման բնույթով

23 **Բնութագրումով որոշել տարածաշրջանը.**

Այս տարածաշրջանը համաշխարհային երկու կրոնների՝ քրիստոնեության և մահմեդականության բնօրրանն է: Արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը: Տարածաշրջանն աշխարհում առաջինն է փյունիկյան արմավի մշակությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

1) Հարավարևելյան Ասիա
2) Հարավային Ասիա
3) Կենտրոնական Ասիա
4) Հարավարևմտյան Ասիա

24 **Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե նրա բնակչության թիվը 32 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 24 մլն.**

1) 60 %
2) 70 %
3) 85 %
4) 75 %

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ճապոնիան, Հարավային Կորեան, Նիդերլանդները բնակչության ցածր խտություն ունեցող երկրներ են:
2) Աշխատանքային ռեսուրսների այն մասը, որը զբաղված է տնտեսության այս կամ այն ոլորտում, կոչվում է տնտեսապես ակտիվ բնակչություն:
3) Մարդկանց գրեթե 70 %–ն ապրում է երկրագնդի ցամաքային տարածքի 7%–ի վրա:
4) Բնակչության միջին խտությունը տարածքի բնակեցման աստիճանն արտահայտող ցուցանիշ է:

26 **Տրված զույգերից որի՞ պետություններն են գտնվում Աֆրիկայում.**

1) Գանա և Թունիս
2) Հոնդուրաս և Գվատեմալա
3) Նեպալ և Բութան
4) Եգիպտոս և Եմեն

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել *սխալը*.**

1) պողպատ — մետաղաձուլություն
2) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
3) պլաստմասսա — մեքենաշինություն
4) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն

28 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ունիտար խորհրդարանական հանրապետություն է:
2) Դաշնային նախագահական հանրապետություն է:
3) Ունիտար սահմանադրական միապետություն է:
4) Դաշնային բացարձակ միապետություն է:

29 **Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներով են խոսում.**

1) արաբները և ղազախները
2) էստոնացիները և ֆինները
3) պարսիկները և բուլղարները
4) վրացիները և ադրբեջանցիները

30 **«Պետություն — խոշորագույն քաղաք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Բրազիլիա — Բրազիլիա
2) Ավստրալիա — Կանբերա
3) ԱՄՆ — Վաշինգտոն
4) Թուրքիա — Ստամբուլ

31 **Ընտրել «մետաղաձուլության ճյուղ — առաջատար երկիր» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. սև մետաղների ձուլում	ա. Ռուսաստան և Կանադա
2. ալյումինի ձուլում	բ. Չինաստան և Ճապոնիա
3. պղնձի ձուլում	գ. Մալայզիա և Բոլիվիա
4. անագի ձուլում	դ. ԱՄՆ և Չիլի

1) 1–ա, 2–դ, 3–գ, 4–բ
2) 1–ա, 2–բ, 3–դ, 4–գ
3) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
4) 1–բ, 2–ա, 3–գ, 4–դ

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
2) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:
3) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:
4) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայաններ:

33 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
2) Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են առավելապես աշնանը:
3) Վանա լճի կղզիներից նշանավոր է Աղթամարը:
4) Հրաբխային ծագման լճերը շատ են Ախալքալաքի սարահարթում:

34 **Արագածոտնի մարզում ոռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել հետևյալ մայր ջրանցքները.**

1) Արմավիրի և Շիրակի
2) Ստորին Հրազդանի և Կոտայքի
3) Թալինի և Արզնի–Շամիրամի
4) Նալբանդի և Լոռու

35 Տրվածներից առավել շատ քաղաքային բնակավայրեր ունեցող մարզն է.

1) Գեղարքունիքը
2) Սյունիքը
3) Շիրակը
4) Լոռին

36 Ո՞ր լեռնաշղթան է քարտեզում նշված *Ա* տառով.

1) Փամբակի
2) Գուգարաց
3) Բազումի
4) Շիրակի



37 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված *Ը* տառով.

1) Թալին
2) Աշտարակ
3) Սպիտակ
4) Մարալիկ

38 **Ո՞ր բնական ռեսուրսն է անսպառ.**

1) կլիմայական
2) հանքային
3) հողային
4) անտառային

39 **Կենդանական ռեսուրսների պահպանմանն ուղղված միջոցառում չէ.**

1) մթերատվության բարձրացումը
2) արգելոցների ստեղծումը
3) «Կարմիր գրքերի» ստեղծումը
4) որսի կարգավորումը

40 **Շրջակա միջավայրում՝ օդում, ջրում, հողում կամ սննդամթերքի մեջ վնասակար նյութի այն քանակությունը, որի ազդեցությունը որոշակի ժամանակահատվածում մարդու առողջության կամ սերունդների համար վտանգավոր չէ, կոչվում է.**

1) կանցերոգեն նյութ
2) ջերմոցային էֆեկտ
3) սմոգ
4) սահմանային թույլատրելի խտություն

41 **Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.**

1) Քաջարան
2) Կապան
3) Շամլուղ
4) Ալավերդի
5) Սոթք
6) Ագարակ
7) Արարատ
8) Ախթալա

42 **Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

1) Լաբրադորյան
2) Պերուական
3) Սոմալիի
4) Ֆոլկլենդյան
5) Կանարյան
6) Օյա Սիո
7) Կալիֆոռնիական
8) Բենգելյան

43 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնց թիվն ավելի քան 100 մլն է.**

1) բենգալացիներ
2) հինդուստանցիներ
3) ռուսներ
4) ֆրանսիացիներ
5) անգլիացիներ
6) իտալացիներ
7) իսպանացիներ
8) գերմանացիներ

44 **ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել արևոտ օրերի թվի աճման կարգով.**

1) Իջևան
2) Մարտունի
3) Գյումրի

45 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Աշխարհում արտադրվող մսի 3/5-ը տալիս է խոզաբուծությունը:
2) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը:
3) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը:
4) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն:
5) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան:
6) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում:

Բ մակարդակ

46 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Լոնդոնը առաջին ժամային գոտում է:
2) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հվ. լ. 23° 30′–ի վրա:
3) Երկրագունդը միջօրեականներով բաժանված է 15 ժամային գոտիների:
4) Դեկտեմբերի 22–ը ձմեռային գիշերահավասարի օրն է:

47 **Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը – 12° է, իսկ նույն պահին ստորոտում՝ + 3°: Օդի ճնշումը գագաթին 460 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել 6°–ով).**

1) 760 մմ
2) 50 մմ
3) 300 մմ
4) 710 մմ

48 **Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ջրի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Կորալյան ծովում:
2) Խաղաղ օվկիանոսի սառը հոսանքներից են Պերուականը և Օյասիոն:
3) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:
4) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հյուսիսային Ամերիկայի հարավային մասում ձևավորվել է մերձարևադարձային խոնավ կլիմայական մարզը:
2) Աֆրիկայի ծայր հյուսիսում է ձգվում մերձարևադարձային միջերկրածովային կլիմայական մարզը:
3) Ավստրալիայի ծայր արևելյան մասում աղեղնաձև ձգվում է արևադարձային խոնավ կլիմայի մարզը:
4) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասը զբաղեցնում է չափավոր ցամաքային կլիմայի մարզը:

50 **Ո՞ր զուգորդությունն է ճիշտ.**

1) Հարավային Ամերիկա — սելվաս — հևեա
2) Եվրասիա — պամպա — ֆիկուս
3) Հյուսիսային Ամերիկա — տունդրա — էվկալիպտ
4) Աֆրիկա — կամպոս — բաոբաբ

51 **Նախագահական հանրապետություններ են.**

1) Բրազիլիան և ԱՄՆ–ը
2) Հնդկաստանը և Գերմանիան
3) Ճապոնիան և Իտալիան
4) Թուրքիան և Իսպանիան

52 **Անագի ձուլմամբ առաջատար երկրներ են.**

1) Գերմանիան և Ֆրանսիան
2) Ճապոնիան և Չինաստանը
3) Իրանը և Հնդկաստանը
4) Ինդոնեզիան և Մալայզիան

53 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
2) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:
3) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:
4) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:

54 **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Խոշոր քաղաքներից են Թուլուզը և Միլանը:
2) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
3) Բնակչությունն ունի միատարր ազգային կազմ:
4) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:

55 **Բնութագրումով որոշել տարածաշրջանը.**

Այս տարածաշրջանի հյուսիսում տարածվում են բարձր լեռներ: Ընդերքը հարուստ է երկաթաքարի, քարածխի, մանգանի, քրոմի պաշարներով: Այստեղ է ծագել համաշխարհային կրոններից ամենաերիտասարդը՝ բուդդայականությունը: Տարածաշրջանն աչքի է ընկնում բնակչության բարձր խտությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

1) Հարավարևելյան Ասիան
2) Հարավային Ասիան
3) Կենտրոնական Ասիան
4) Հարավարևմտյան Ասիան

56 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հարավային մասում՝ Միջագետքի ցածրադիր հարթավայրի հարևանությամբ, բարձրանում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան:
2) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի լեռներով:
3) Հարավ–արևելքում է Սավալան հրաբխային վիթխարի զանգվածը:
4) Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:

57 **ՀՀ–ում ամենաքիչ տեղումները լինում են.**

1) բարձրադիր լեռնային գոտում
2) եզրային լեռնաշղթաների հողմահայաց լանջերին
3) միջլեռնային գոգավորություններում
4) միջին բարձրության լեռնային գոտիներում

58 **Երկաթուղային հանգույցներ են.**

1) Վանաձորը և Սպիտակը
2) Սևանը և Վարդենիսը
3) Գյումրին և Հրազդանը
4) Արմավիրը և Արտաշատը

59 **Արարատի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ամենամեծ քաղաքային բնակավայրը Արարատն է:
2) Տարածքի լեռնային մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի միջին բարձրության լեռները:
3) Հարուստ չէ օգտակար հանածոների պաշարներով:
4) Բարձր է բնակչության միջին խտության ցուցանիշը:

60 **Ցեմենտի գործարաններ կան.**

1) Երևանում և Աբովյանում
2) Արտաշատում և Արմավիրում
3) Գավառում և Մարտունիում
4) Արարատում և Հրազդանում

61 **Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ արևմուտքից արևելք հաջորդականության.**

1) Շվեյցարիա
2) Լիխտենշտայն
3) Ֆրանսիա
4) Ավստրիա

62 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում *չեն*.**

1) Բյուրեղավան
2) Սոթք
3) Վարդենիս
4) Դիլիջան
5) Մարտունի
6) Հրազդան
7) Սևան
8) Ճամբարակ

63 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

1) Տիգրիս
2) Օրանժ
3) Նիգեր
4) Սիրդարյա
5) Մուրեյ
6) Ինդոս
7) Մեկոնգ
8) Զամբեզի

64 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.**

1) Ճապոնիա
2) Չինաստան
3) Պակիստան
4) Գերմանիա
5) Թուրքիա
6) Հնդկաստան
7) Ինդոնեզիա
8) Իրան

(65-66) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 6‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 18 000 մարդ, արտագաղթը՝ 5 000 մարդ.

65 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

66 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

67 Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ³ է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(68-69) Նավը հս. լ. 36º30´–ի և արլ. ե. 50º–ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

68 Հարավային արևադարձից:

69 Հյուսիսային բևեռային շրջագծից:

70 **Հյուսիսային Ամերիկայի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային մերձարևադարձային գոտուց մինչև մերձարկտիկական գոտի:
2) Բարեխառն գոտու ներքին շրջաններում կլիման ծովային է:
3) Լաբրադորյան և Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
4) Գոլֆստրիմ տաք հոսանքը առաջացել է տոռնադոյի պատճառով:
5) Յուկատան թերակղզին գտնվում է արևադարձային կլիմայական գոտում:
6) Արկտիկական կլիմայական գոտում տեղումները քիչ են՝ 200-250 մմ: